ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՅԻՍԻ 2024թվականի N 817-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱԶՄՆ ՈՒ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱՌԱՎԱՐԻՉԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մաս 24) կետով , «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Եվրոպական հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությանը միանալու մասին Ալավերդի համայնքի ավագանու 2016թ. հունիսի 16-ի N 33-Ա որոշումը և Ալավերդի խոշորացված համայնքի տնտեսական, բնապահպանական և սոցիալական կայունության բարձրացման նպատակով 2022թ. հունվարի 1-ից մեկնարկած «Համայնքի կայունության ամրապնդում էներգաարդյունավետության և ցածր արտանետումներով զարգացման միջոցով» ծրագիրը

որոշում եմ՝

1. Ալավերդի համայնքում էներգետիկ կառավարման համակարգ ներդնելու, Ալավերդու համայնքապետարանի ենթակայության ընկերությունների/ կազմակերպությունների շենք շինություններում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումները համակարգելու, հարմարավետությունն անհրաժեշտ մակարդակի բերելու ու էներգաարդյունավետության ներուժը գնահատելու, վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառումը վերահսկելու, ինչպես նաև մոնիտորինգ իրականացնելու նպատակով ստեղծել Ալավերդի համայնքի էներգետիկ կառավարումն համակարգող աշխատանքային խումբ:
2. Հաստատել Ալավերդի համայնքի էներգետիկ կառավարումն համակարգող աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել Աշխատանքային խմբի աշխատակարգը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Ընդունել ի գիտություն, որ Ալավերդիի համայնքապետարանի էներգետիկ կառավարչի պարտականություններն իրականացնում է Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի հողաշինության և բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնակատար Էրիկ Իգնատենկոն, մինչև ծրագրի գործառնական ավարտը:
5. Հանձնարարել Աշխատանքային խմբի ղեկավարին՝ ապահովել տեղեկատվության տրամադրումը էներգետիկ կառավարչին՝ Ալավերդու համայնքապետարանի ենթակայության ընկերությունների/կազմակերպությունների շենք-շինությունների և դրանցում սպառվող վառելիքաէներգետիկ ռեսուրսների, իրականացված, իրականացվող կամ նախատեսված էներգախնայողության և/կամ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների ու ծրագրերի վերաբերյալ:
6. Հանձնարարել Ալավերդի համայնքի ենթակայության ընկերությունների/կազմակերպությունների տնօրեններին և Ալավերդիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝
1) Համապատասխան հրամաններով նշանակել վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառման ծավալների և արժեքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և տրամադրման համար պատասխանատու անձանց (այսուհետ՝ Պատասխանատու անձ), որոնք սահմանված ժամկետներում պահանջվող տեղեկատվությունները կտրամադրեն էներգետիկ կառավարչին:
2) Պատասխանատու անձանց նշանակման վերաբերյալ հրամանների պատճենները ներկայացնել Ալավերդիի համայնքապետարանի էներգետիկ կառավարչին՝ նշելով պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները՝ հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն:
3) Պատասխանատու անձանց՝ խմբագրելի էլեկտրոնային ձևաչափով լրացնել ընկերությունների/ կազմակերպությունների օբյեկտ(ներ)ի տեղեկատվական քարտ(եր)ը՝ ըստ պատասխանատվության ոլորտների և էլեկտրոնային ձևաչափով ներկայացնել Ալավերդիի համայնքապետարանի էներգետիկ կառավարչին:
7. Սահմանել համայնքային ենթակայության ընկերությունների/կազմակերպությունների կողմից վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառման ծավալների և արժեքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և Ալավերդու համայնքապետարան փոխանցման մեթոդը՝ էլ փոստ, էլեկտրոնային կամ առձեռն եղանակով:

8. Սույն որոշման կատարման կազմակերպող և պատասխանատվություն կրող նշանակել Աշխատանքային խմբի ղեկավար և Ալավերդիի համայնքապետարանի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետին :
9. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

10. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 02 մայիսի 2023 թվականի թիվ 544-Ա և 12 մայիսի 2023 թվականի թիվ 605-Ա որոշումները:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. մայիսի 07
ք. Ալավերդի